

որ ամէն առտու ժամը 4<sup>եւ</sup> զինքը արթընցընէ . և որովհետեւ անով ալ չէր կրնար ելլէլ, պատուիրեց որ արթննալուն պէս՝ երեսին վրայ թրջած լաթմը կամ ուրիշ բան մը ձգէն, ինչուան որ կամաց կամաց վարժեցաւ կանուխ ելլէլու :

„ Վանթ գերմանացի փիլիսոփան միշտ ժամը 5<sup>եւ</sup> կ'ելլէր, և անկողինը բոյն հիւանդութեանց կ'անուանէր :

„ Ուրբ գրոց մէջն ալշատ տեղ կանուխ ելլէլուն օգուտները և ուշ ելլէլուն վասները կը նկարազրուին . ինչպէս Աղոյոմնն Առակաց գրքին մէջ կ'ըսէ . „ Անչեւ ցերբ յորսայսեալ կաս, ով վատ, կամ Երբ ՚ի քնոյ զարթիցես . փոքր մի ննջիցես, փոքր մի նստիցիս, փոքր մի նիրհիցես, փոքր մի հանգուցանիցես զձեռն քո ՚ի վերայ լանջաց : Ապա հասանիցէ ՚ի վերայ քո իբրև ըզչար ուղեոր տնանկութիւն, և կարտութիւն իբրև զժիր սուրհանդակ , „ :

„ Աէկ խօսքով, մարդուս կենաց պատուական դրամագլուխը մի միայն իր անցուցած ժամանակին է . ան մարդը միայն շատ և երկայն ապրող կը սեպուի՝ ով որ իր ժամանակը ամենւին պարապ և անպտուղչանցըներ . ըսել է թէ ով որ իր բոլոր կենացը երրորդ մասը հազիւ քունի համար կը կորսընցընէ :

### ԱՐՈՒԵՍՏ ՊԱՅՏԱՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Բ .

**Չէ պահողներու հարէաւոր գիտնալէ :**

**Չէ պահողները պէտք է անանկ ձի առնեն՝ որ սրտերնին փակչի . վասն զի մարդս սիրած բանին աղէկ ինամ կ'ընէ . և ձին ալ աղէկ ինամուսէր կ'ուզէ :**

**Արքափ որ քաղցր և անուշ վարուխս հետը, այնչափ կ'ուրախանայ և մարմալ կը գիրանայ . բարկութիւն ու հայհոյանք չուղեր, շուտով կ'իմանայ սիրտը կը նեղի, մարմնովալ կը հալի :**

**Ուստի աղէկ տեսակ ձի պահող մեծերը արաբացի ձիապան կը պահէն, որոնք թէ որ նեղսիրտ բնութիւն չունենան նէ՝ սիրով ու անուշութեամբ կը վարուին հետը, սուլելով՝ խաղ կանչելով գարման կ'ընէն, և ուրիշ բաներուն ալ աղէկ ուշադիր կ'ըլլան :**

**Այնպէս բուլղար ձիապաններն ալ ձիու աղէկ կը նային, թէ և խիստ ալ կը վարուին :**

**Ձին աշխոյժ կենդանի է, երգերու ու նուագարաններու ձայները կը սիրէ, խաղալ կը սկսի, հանդէմներու մէջ կ'ուրախանայ՝ որպէս թէ ինքն է որ կը փառաւորուի, բայց տիրոջը փառաւորութեանը համար կ'ընէ :**

**Շատերը ձի կ'առնեն, ու թէ որ անով բաղդաւորութեան մը համնին նէ՝ ալ ձեռքէ չեն հաներ :**

**Շատերն ալ մեծ ուշադրութիւն կ'ընեն առած կենդանիներուն գոյներուն, վասն զի կը կարծեն թէ ոմանց աս գոյն կենդանին՝ ոմանց ալ ան գոյն կենդանին աղէկ կուգայ : Ասոր վրայ արտառոց պատմութիւն մը ընեմ, որ փորձ ընողները իբրև Ճմարիտ պատմեցին ինծի՝ : Վէօթահեայէն Ուշագ երթալու Ճամբուն վրայ Ճէվրէնտին մօտ աչք մը ջուր կը պղպջայ, բայց դարձեալ իր մէջը անյայտ կ'ըլլայ : Ունէ որ մէկը ուղենայ գիտնալթէ ինչ գոյն ձի կրնայ իրեն բանին գալ, Ճերմակ թաշկինակի մը ծայրը հանկուրց կ'ընէ, ան ջրին աչքին մէջը կը կախէ, կէս ժամէն ետեւ կը հանէ, հանկուրցը կը քակէ եղեր, մէջը մազ մը կը գտնէ, ան մազը ինչ գոյն է նէ՝ ան գունով կենդանին իրեն օգտակար կ'ըլլայ կ'ըսեն :**

**Աս իրաւ է որ կերպ կերպ գոյն ունեցող ձիերը զատ զատ ալ բնութիւն կ'ունենան : Ասոր համար կ'ըսեն տաճկերէն . Անմաս ալ, սամ եալընը, պին քօռույտ, պէս լէ գըսը . գուլը ակէմ պէտք իրաւ, կը եր եալը գուլընը սիյահ օլս :**

**Աշխէտ՝ ձիերուն մէջը աղէկը հա-**

<sup>1</sup> Ասոր նման աւելորդապաշտութեանց վրայ ուրիշ անդամ կը խօսինք :

<sup>2</sup> Աւ :

զիւ կը գտնուի . աս տեսակէն շառնելը  
և չպահելը շատ աղէկ է :

Ան ձիերուն մէջ ալ գէշ բարք չու-  
նեցողը հազիւ կը գտնուի . կ'ըսուի որ  
շորս սոքերը և ճակատը Ճերմակ ըլլայ  
նէ՝ գէշ բարքը կոտրած կ'ըլլայ , բայց  
դարձեալ հնար չկայ՝ շատ կամ քիչ գէշ  
բարք կ'ունենայ : Անսաւանդ վտան-  
գաւոր է կայծակի ատեն սև ձիու վրայ  
հեծած գտնուիլ , կը վախցուի . վասն  
զի անոր վառեալ սեռութիր համակրու-  
թի ունի կայծակը իրեն ձգելու , և իրեն  
ալ հեծնողին ալ վնաս կրնայ բերել<sup>2</sup> :

Չ առատ ձին արատաւոր չէ նէ՝ դի-  
մացկուն կ'ըլլայ , և գործի ալ աղէկ կը  
բանեցուի :

Առղոչիկ ձին դարմանելու աղէկ  
կուգայ ու կը գիրնայ . բայց ասոնց մէջ  
ալ անսանկ թոյլեր ու տկարներ կը գըտ-  
նուին որ ճամբան դուն կոնակդ առ-  
նելու տանելու ես :

Ութ շառատ ձին թէ որ բաշերը՝  
պոչն ու ոտքերը սև չէ նէ , յարգի չէ ,  
շունչը կարծ ու ծոյլ կ'ըլլայ :

Ա երջապէս աղէկ ձի առ և աղէկ ալ  
պահէ , իրեն ու կերակուրին աղէկ ուշ  
դնելով , մանսաւանդ դարմանելուն , վամն  
զի ինչպէս որ կ'ըսեն , իտի լիժար պիր էէն .  
ինչու որ դարմանը կերակրէն աւելի  
կենդանին աշխոյժ կ'ընէ , ու շատ ա-  
ռողջութեր և աղէկութեր պատճառ է :

Ոյէ որ ձիուդ դու նայելու ես , հե-  
տը անուշ վարուէ , ու ամէն բանին ա-  
տենովը ուշաղիր եղիր , գիշերն ալ եր-  
կու անգամ քովը գնա , գլուխն ու գա-  
ւակը շփէ . տակը թաց է նէ՝ մաքրէ ,  
չոր խոտ փոել պէտք է նէ՝ փուէ , յար-  
գը նորոգէ , քիչ տուր՝ ստէպ տուր .  
ասանկը կը սիրէ ձին , ասոր վրայ սէր  
մը կը կապէ , կը զուարձանայ , կ'ուրա-  
խանայ , և երբոր դու ալ վրան հեծ-  
նաս՝ ան ալ զքեզ կ'ուրախացընէ :

### 1 Եաււ:

2 Աս կարծիքը թէ որ իրաւ է , պատճառը ան  
կրնայ ըլլալ որ սև դոյնը աւելի հաղորդական  
ելեքտրականութեան :

### 3 Տօնու :

### 4 Գլուխ :

Ոյէ որ ուրիշի նայիլ տալու ես , ա-  
նանկ ձիապան մը գտնես որ բնական  
ալ յարմար ըլլայ , և ձի նայելու սէր  
ունենայ : Ա ասն զի տեսայ անանկ հո-  
վիւ , որ ոչխարի հօտը գարնան ատեն  
ուր որ ծաղկալից է՝ միայն հոն կը տա-  
նէր արծելու , ոչխարներն ալ գիտնա-  
լով անօթի կ'երթային մինչեւ որ ծաղ-  
կալից տեղը համակին , և ինչուան որ  
ծաղիկը չհատնէր՝ խոտի չէր թողուր :  
Ամէն մէկ ոչխարին մէյմէկ անուն դրեր  
էր . հեռուէն որն որ կանչէր՝ անիկայ  
խմբէն կը զատուէր , քովը կը վազէր .  
քիշ մը աղովը կը շահէր զինքը . վասն զի  
աղ տալով ան անունը միտքը պահէլ  
տուեր էր : Խեսայ անսանկ ջորեսան ալ  
որ երբոր ջորիները բեռներովը կը բե-  
րէր , մէկէն բեռները կը թափէր . ա-  
մենէն առաջ ընելու գործն էր ջորինե-  
րը ախոռը քաշել , տակերնին աւելել ,  
թամբին գոտին թուլցընել , առաջք-  
նին յարդ թափէր . ետև կուգար բեռ-  
ները կը վերցընէր , բերած գիր կամ  
լուր մը ունէր նէ՝ ան ատենը կուտար ,  
կ'երթար անգամ մըն ալ յարդ կը թա-  
փէր , ետքը իրեն ալ հոգը կը հոգար :  
Դարմանի ատեն գար նէ , թեւերը կը  
սօթտէր , համետը վար կ'առնէր , սու-  
լելով խաղ կանչելով , այսինքն սիրով  
անուշութեամբ և ոչ թէ ակամայ կեր-  
պով մը դարման կ'ընէր . ուստի ասանկ  
նայուած կենդանին ինչպէս չուժովնար  
և ազատ չմնար կերպ կերպ հիւանդու-  
թիւններէ : Ա պանկ ալ ձի պահողը  
մասնաւոր սէր պիտի ունենայ ձիու ,  
կամ ձիապան ունի նէ՝ ան ալ փութա-  
ջան ըլլայ , որ աղէկ մնան կենդանիները :

Ոյէ որ ձիապան ունիս , գէթ երբեմն  
ազքիդ առջեւ գարման ընել տուր :

Ա ենդանին դարմանելէն ետև ջուր  
տաս , ետքն ալ գարին . ումանք գարիէն  
ետև ալ ջուր կուտան , բայց անսանկ  
վարժեցընելէն է : Ամանք գարիի տեղ  
վարսակ՝ կուտան , բայց վարսակը մա-  
զերը կ'երկընցընէ , ու տգեղ կ'ընէ :  
Ա իայն թէ վարսակն անսանկ մորուկնե-

րու աղէկ կուգայ՝ որ լեռը սորված են, և իրեք չորս տարուան եղած ախոռը կը բերես կը կապես, ասանկներուն արօտի տեղ կ'անցնի, զով կը պահէ ու ըմատուժցներ :

Ա այրի ողոր տաքութիւն կուտայ կենդանւոյն :

Եգիպտոս գարիին տեղը ձիուն բակլայ կուտան, բայց ամէն տեղ լաւ չէ. վասն զի Հայաստան աղէկ ձիու մը տուող եղաւ, բայց աջքերը կուրցուց :

Ոմանք ալ մէկ քոռ՝ աշընցան ցորեն՝ մէկ քոռ բակլայ, երկու քոռ գարի մէկ տեղ աղալ կուտան. առտուները ասկէ մէյմէկ քիչ խիւս կ'ընեն կը կերցնեն, իրիկունն ալ իր կերակուրը կուտան, որ շատ աղէկ կուգայ կենդանւոյն : Ոմանք ալ ցորեն, կորեկ, քիչ մըն ալ չաման՝ կ'աղան ու խիւս կը չինեն, ձիուն կուտան : Իակ գարին ամենէն օգտակար է ձիուն, ու մաղերն ալ կը փայլեցընէ :

Ի՞ն ձին որ գարին չժաման կ'ուտէ, յարգի չէ. վասն զի մնունդ չառներ, անուժ կը մնայ, Ճամբու չդիմանար : Ո՞անկներուն գարին կ'աղան՝ անանկ կուտան, թէպէտ շատին ալ օգուտ չըներ. մանաւանդ Ճամբորդներն ուր գրտնեն ամէն տեղ աղացած գարի :

Ո՞յն ձին որ գարին լափելով կ'ուտէ և տօպրակը կը թրջէ՝ յարգի չէ, վասն զի իջուածք կամ վէրք ունի կոկորդը : Ո՞անկին գարիին տօպրակին մէջ քանի մը մանր քար կը ձգեն որ ակռային դպչի, վախուն սկսի զգուշութեամբ ուտել :

Ի՞ն ձին որ գարին ծանր կ'ուտէ, ծամելով աղէկ կը մանրէ, և ախորժակով կ'ուտէ, աղէկ ալ կրնայ մարսել, մնունդ կ'առնէ և աշխատութեան ալ կը դիմանայ, յարգի ձի է :

Ի՞ն ձին որ երկար ատեն կապուած է, երկար Ճամբայ ընելէն օր առաջ պէտք է հեծնալով քիչ քիչ վարժեցընել. պէտք չէ մէկէն ՚ի մէկ հանել ու երկար Ճամբայ քշել, չէ նէ կը մնասուի :

Անէ որ կենդանիդ անփորձ է, իջած

տեղդ իրեք իրիկուն իրարու վրայ ասանկ զարմաննէ. չորս հաւկիթ, հարիւր տրամ օղի, բուռ մը աղ, քիչ մըն ալ սապոնի մանրուք աղէկ մը հարէ, ուսերուն վրայէն մինչև առջի ուրքերուն կձղակները ուժով մը քըսէ, ըղունգներովզդ ալ քերէ որ ներս բանի, շատ աղէկ կուգայ կենդանւոյն :

Դրտուն որ հեծնելու ես՝ կանուխ յարդ կերցուր, ետքը քաշէ հեծիր : Ո՞ինչև մէկ ժամուան տեղ կենդանին մի նեղեր. անկէ ետև ալ անոր հոգը չէ Ճամբան ու աշխատութիւնը :

Ճամբան ամէն պատահած տեղդ ջուր մի տար, վասն զի կը թուլնայ ձին. զառ ՚ի վեր տեղ ելելէն առաջ ալ ջուր մի տար որ չյոգնի կենդանիդ, և ըլլայ որ համնելու տեղիդ ալ շատ մօտ եղած ըլլայ. մէկ ժամու չափ միջոց ունեցած ըլլայ. ան ատեն իրիկուան գարիին ատենն ալ ջուր տալ պէտք չէ : Շատ ալ քրտնած ըլլայ, մանաւանդ որ տեղ մը կ'ինջնաս՝ որ կենդանին ալ քիչ մը յոգնութիւն առած կ'ըլլայ, հեծնալու ատենդ ջուր տուր, սանձն ալ բերնէն մի առներ՝ որ հանդար խմէ :

Իրիկուան իջար, կէս ժամէն աւելի ժուռ ածցուր կենդանիդ որ աղէկ մը քրտինքը անցընէ, ետքը կապէ, և թող տուր որ սանձովը քիչ մըն ալ կենայ, անով զբաղի, ու մէկէն ՚ի մէկ յոգնած յարդ ուտելու ետեւէ ըլլայ, ու յարդը չթափած՝ սանձը մի առներ որ սանձին փոշիները լիզէ : Վիչ քիչ դիր յարդը ու յաճախ, վասն զի աս կերպը կենդանւոյն անուշ կուգայ :

Ո՞տու ածցուցած տեղդ պաղ է նէ, ծածկոցը վրան անցուր. կապած տեղդ ալ պաղ է նէ, տօպրակով յարդը գըլուխը անցուր, ոտքին տակը թաց է նէ՝ աւլէ. չորս ժամետքը՝ ան ալ տաք տեղ՝ կռնակը բաց դարման ընելու է, անանկ որ հինգ ժամետքը գարին կախես :

Դարմանելէն ետև ջուր տալ պէտք է նէ՝ տուր, ետքը գարին կախէ. գարին մաղես և անանկ տաս, շատ աղէկ է. վասն զի անոր փոշին կենդանւոյն կուրծքը չգոցեր. մէջը աղք ալ կայ նէ

1 Սիւնթէր. Էակ Կառագայաց :

2 Քիւնէ :

3 Պառըլագ :

4 Պօ, Բօխում :

կը զատուի , կենդանւոյն վնաս չիտար : Տօպրակը առնելէն ետև նայէ որ կենդանին միջոց ունենայ վրայէն յարդ ուտելու , վասն զի շատ յոզնած ըլլալով՝ կ'ըլլայ որ յարդ չկերած քնանայ , դուն ալ առտուն ուշադրութիւն չկրնալով ընել ջուր կուտաս , որ գարիին վրայէն խմելով կը վնասուի . ուրիշը որ իր կենդանւոյն կանուխ գարի տայ նէ , քուձիդ զատէ քովին , կամ բուռ մը գարի ցանէ յարդին վրայ , որ ակնիտ կամ աշխայ՝ ըլլայ : Վատերը իրենց կենդանին ակնիտ ըլլալու համար՝ որոշած են , ուր որ իջնան ամէն իրիկուն՝ կենդանւոյն աչքերը և ականջները ձեռքով ուժով մը աճըռելով կը չփեն :

Կենդանւոյն սանձը առնես նէ՝ զատ կախէ , ուրիշի սանձին հետ մի կախեր , մի գացուներ . վասն զի աս սանձերէն ալ կենդանիները պլըշտըկող հիւանդութիւններ կ'աւնեն . նոյնպէս ալ տօպրակը , ծածկոյթը . քերոցը զատ ըրէ , չգիտցած կենդանւոյդ գացընել մի տար : Իս բաներուս աղէկ ուշադրութիւն ընես նէ՝ կենդանիդ շատ հիւանդութիւններէ ազատ , առողջ ու ժիր կը մնայ , ձամբորդութիւնդ ալ հանգիստ կ'ըլլայ :

Քանի մը ձի և բեռնակիր գրաստ ունիս , կ'ուզես որ իրարու ընտանի ըլլան , այսինքն մէկտեղ արծին և իրարմէ ալ զզատուին . քիչ մը ատեն ասանկ ըրէ . կերակրին տօպրակը փոփոխ տուր՝ մէյմը մէկուն մէյմը մէկալին : Ձիերը որ կուրտին և մէկմէկու հետ աւրուին , երբոր չես կրնար զատել ասանկ ըրէ . ձանկով չոր աղը կամ հող առ՝ գլխունուն նետէ , կը զատուին :

Երբեմն կ'ըլլայ որ կենդանին քանի մը օր գոցուած կը թողուն անհոգութք ու ջուր տուած չեն ըլլար . ասանկը ջուրի տանիս նէ , սաստիկ ծարուած ըլլալով՝ անյագ կերպով ջուր կը խմէ . որով կը ձաթի : Իսանկը պէտք է որ քանի մը կաթիլ ջուր բերանը առնելուն պէս՝ դլուխը քաշես , ու երբեմն երբեմն թողուս . առջի բերանը քիչ քիչ ջուր

խմէ , և շատ ալ ջուր պէտք չէ տալ : Ձին կամ ջորին արօտի կապես նէ , օր ընդ մէջ իրեք անգամ աս գեղս ըրէ . հաւկըթին մէջը պարպէ , կՃեպին մէջը զիհիի խէժ՝ լեցուր , և անամկ կը լելտուր . վեց օրը իրեք անգամ աս ընես նէ , կենդանւոյն շատ տկարութիւն ները կ'անցընէ , արիւնը կը մաքրէ , մազերը կ'աղուրցընէ , և ասկէ ետև թող որ շատ արածի :

Ձիուն կէս օխա գինի խմցընես նէ , յօժարութեամբ ձամբայ կ'ընէ . բայց չկը ուտած ձիուն խմցընես նէ , շատ կը խխնջայ , հեծողին ալ նեղութիւն կուտայ . այսպիսւոյն խնծոր մը տուր ուտելու , կը կակըղնայ : Պլղտիկուց կը ուտած ձին շատ չմեծնար , միայն կը լայն նայ՝ ուռածի պէս . կատաղի եղող էշը չգիրնար . խոչոր էշերն ալ խարդախ կ'ըլլան ու դարն՝ ի վեր չեն կրնար ելել :

Իս քուռակը որ լեռը եւրիւներուն քովը մեծցած է՝ առջի ձմեռը բերես ախոռը կապես նէ , կը նիհարնայ . բայց երկրորդ տարին երբոր կը սորվի , ջրին կերակրին վարժի նէ՝ կը սկսի լաւ սընունդ առնել : Իսոր համար կ'ըսուի տաճկերէն . Իլլ ալլրան՝ նալլապան , չէչ ալլրան՝ նանդրադան :

Պ . Պ

### ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏ

Վըպոտած գոհաբները <sup>2</sup> հադրել :

ԼԱԿՈՒՆ վրձին մը սապոնջրի մէջ թաթիւէ , անով թեթե կերպով մը գոհարներուն վրայէն անցիր , մէկ երկու վայրկեան զանոնք ջրին մէջ թող , ու հանէ կրակին քովը դիր որ չորնայ . ետքը քիչ մը հաց այրէ , փոշի ըրէ ու անով գոհարները շփէ :

1 Ալլրան՝ գոհաբներ :

2 Ճէլան՝ իր :